

ԱՐԵՎԱՏԱԿԻ ԲԱԶՄԱՎԻՊԻ

ՆՈՐ ՀԱՐՑՄՈՒՆՔ

4. Пъзълът сърдечка

Անցեալ տարի սպարհի Առողմանդակի մէջ ե-
ավիկոպասկամ խորի վերայ մի պատասխամ
տրուեցաւ: Այժմ կը հարցմեմ մեզ քանիամե-
յակամ սպատառտիմ համար:

Նախ թէ եղբ մտած է մեր մէջ, եւ եւ պիշուառսներէն այլ՝ թէ միայն քամանայիցմէ գործածուեր է, կամ ժամանակ մի առաջին օրեկէ եւ ապա երկրորդներէն:

բ. Այժմ՝ Սարկաւագումք այլ կը գործածեն
զայն. այդ ո՞ր դարձէն է, եւ օպիմատո՞ր է ար-
գեօր;

2. “ՎԵՐԱՎՈՐԵԱԿ”, ԿՈՉՄԱՆ ԳԱՏՃԱՌՆ

ନୀତିରେମ ରୂପିତାଖ୍ୟାପି ଉତ୍ତରକାନ୍ଦଫଳକିତ ନିଶ୍ଚିକ
କୁଳ ହାରଗ୍ରସ ଫନ୍ଧାପଣେଇବୁ ଅପାପିସିଲାବ ମି ତାପିଲୁ
ପ୍ରାପିକ ମନ୍ଦର କେ ଫୁଲିଥାପି, ପ୍ରାପି ଘରୁ ମେଦେବାପକୁ
ଅପାପିତାପରାଦ ଅଖିପି ଫଳିତି: — ପ୍ରେକ୍ଷାପାରେକାଳ
କୁଳ ଅର୍ପନେବାର ଫ୍ରେଙ୍କାପାରେକିତ୍ତ ରାତାପରିପାଦ ମେଳେ
କ୍ରମ ରାତାପରିପାଦ ହରବେ ହିନ୍ଦରିଧାପାଇଏ କୁଳ ମନ୍ଦା
ପାଦକିରଣ କୁଳ ମନ୍ଦରେଥିବେ ଅର୍ପନେବାର ପ୍ରେକ୍ଷାପକୁ ପରି
କେ ହେବ ରାତି ଫୁଲିବାର କୁଳ ମନ୍ଦରେବେ ପ୍ରେକ୍ଷାପକୁ ପରି
ପ୍ରାପିକିରଣ ଦିନ ଫଳିତି: କ୍ରମ ଫଳିତି ଦିନମାନାପକୁ ଦିନବେ
କୋରନ୍ଦାପରାନ୍ଦର ରାତାପରିପାଦ ହରବେ କୋର ଦ୍ୟାଜନାପର ରାତା
ପରିପାଦ ହେବ ଦିନ ଫଳିତି ଯାତାପାଦ ବ୍ୟକ୍ତିପରିପାଦ ହିନ୍ଦ
ଶିଲ୍ମର କେ ପ୍ରେକ୍ଷାପକୁ ଫୁଲିବାର କୁଳ ଅଭିମାନ କୁଳ ଫ୍ରେଙ୍କା
ପାରେକାଳ ରାତାପରିପାଦ ହିନ୍ଦମେତ୍ତି କ୍ରମ ପରିପାଦ
କୁଳ କାବାଳେ କୁଳ ଆର୍ଟ କାବାଲିଟିକୁ ରାତାପରିପାଦ
ଫୁଲିବିତ: — ଅର୍ପି, ଅମ୍ବ ମନ୍ଦରେ ରାତି କେ ମାନିକା
ମାଲି, ମାଲାକୁ ହେବ ଦିନ ଫଳିତି ମହିଦି ଓର ମହିଦି ମହିଦି
ମହିଦି ରାତାପରିପାଦ ହେବ ମାନିକି ଫୁଲ ହେବ ମାନିକି
ମାନିକି ମହିଦି ଅର୍ପନେବାର ଅର୍ପନେବାର ମହିଦି ମେଳେ ଫ୍ରେଙ୍କା
ପାରେକାଳ କାବାଲିଟି ମହିଦିର କେ ମହିଦିର: —

ՊԱՏԱՍԽԱՆ

ԲԱՁՄԱՎԻՊԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿԻՆ

4. ГЪІ ВУДСЯ

Բայշնչիքի Առանձնական այս անգամ իւր ըրած այցելութեամբ՝ բաւական հստութիւն պատճառեց մեր զասախմբին մէջ, անհատ նում վէճ մը յարոց, որոն վերջաւորութիւնն իր բերած հարցին զրեթէ զրեթէ իրական փորձը պիտի լինէր. այդ հարցն էր Մենամարտի վրայօց եղածն. — Զանազան կարծեաց բաժանումն ծագեցաւ մէջերնիւ. ոմն կը զովէր մենամարտը՝ իրբեւ նշան ցաջարի ուսույ, իբր ասպիտական առաքինութիւնն մի. ուրիշ մի կը քարոզէր զայն՝ անարդար և բարբարոսութիւնն մատած վաստովորութիւնն մի. երրորդ մի՝ զայն մարդկութեան ֆասակար և անպատճարեր ճանչնալով հանդերձ, սակայն անհրաժեշտ կարեւոր կը համարէր, ինչպէս են տիւուր և աւերիչ պատերազմնանք. շորորդ մ'ալ՝ իրբեւ միջնորդ հաշտարար ծայրայից կարծեաց՝ մասմաք մի օգտակար և մասամբ մ'ալ վասակար կը զատէր. — իրարու ֆասաերն հերթելու չերթն ու բուռն վիճաբանութիւնն մի՝ երկար ժամեր տեւեց, և զուցէ տաք տաք խօսքերու նաեւ տաք տաք զործեր ալ յաջորդէին, եթէ վիճին զայրացած վայրկենին՝ բարեխախտաբար վրայ շնասնէ՛ իր զիտութեամբ և բարբով մեզ ամենուս պատկանելին՝ վարժարանին բարոյազիտութեան ուսուցիչն. Սա հանգարտեցնելով զմեզ, և յետ ամէն մէկերնուս կարծիքն ու պատճառները մի առ մի լսելու, և իմանալով նաեւ որ մեր վիճին սկզբանութիւնը լողող Առարկանդակի հարցերն էին, հետեւեալ խօսքերով մեր բանավէճը զարդեցուց. զորս ես զրի առներով կ'ուզարկեմ իբր պատախան Առարկանդակիդ հարցմանց.

« Մենամարտն ուրիշ բան չէ բայց եթէ երկու անձանց մէջ տեղի ունեցած անարդարութեան խնդրոյ մը՝ տեսակ մի լուծումն, որուն մէջ բանութիւնը և կամ զիպուածը գատավիճիք կու տայ՝ փոխանակ իրաւունքի կամ օրինաց : Ուստի մենամարտի հիմք կրնայ համարուիլ « իրաւունք հզօրագունին » առածը : — Այդ հիմք մեզի յայտնի ցոյց կու տայ՝ որ զարդացեալ մարդկութիւնն զադափարականին նըշափ հակառակ է մենամարտը :

« Եթէ պատուելթեանց Էլերուն զիմենք՝ պիտի զսնենք որ մենամարտն ի սկզբան անկանոն և կիսավայրենի ազգաց մէջ տեղի ունէր, որոց աւանդութեանց հասած են մեզ առասպեկիներու ձեւի ներքեւ : Այսկայն այդ ժամանակիներն ուրիշ օրէնք շնուին մենամարտողին բայց միայն իրինց քամահանոյրով հաստատուած աւելի կամ պակաս պայմաններ :

« Երբ մարդկութիւնը սկսաւ այժմեան պատմական ճամփառուած՝ համեմատաբար զարդացեալ շրջաններու մէջ ուոր կոսել, սկսուեցաւ մենամարտի հակառակ օրինական վճիռներ արուիլ, բանի մ'ազգաց մէջ իրը համազգային ճանչցուած պայմաններու մէջ ամփոփելով զայն : Բայց այդ ժամանակի մենամարտը աշը աւելի պատերազմաց ատեն հանդիպած միջադէպներ էին, և կամ ըսեմ մեծամեծ պատերազմական սղբերգութեանց հետ կապ ունեցող զրուագներ էին :

« Մենամարտն ազնուացընել ջանացող կամ յատուկ օրէնսդրական ձեւի ներքեւ զնող զարը՝ միջին կոչուածն եղաւ, յորում ասպետութիւնն իւր ծայրագոյն զարգացման հասած էր, և ոչ միայն հասարակաց օրէնքի համաձայն չէր շարժէր, այլ նաև իրեն նախատինց կը համարէր սովորական մարդկանց համար զրուած օրէնքներուն հպատակիլ :

« Ասահետական հաստատութեանց անկման հետ՝ վեցուեցան նաև մենամարտուներու ձեռք բերած առանձնաշնորհութիւնները . և նոր ժամանակաց պարանցներէն մին եղաւ՝ այդ բանութեան և անարդար հիման վրայ զրուած սովորականը չնչելու չանցն, սկսե-

լով նախ օրինագոյց մէջ զայն ապօրինի ճանշնաւ և պատուհասի ենթարկել : Զինուուր որութիւնը՝ որ բռնաւոր ոյժը կը ներկայաց ցընէ դեռ եւս մենամարտի բանական իրաւունքը մերժած ասրագրի ըրած չէ իւր մի չեն . բայց այն ալ մենամարտողները պատուհասի կ'ենթարկել, իսկ չմենամարտուն ներն՝ անաբազմութեան, յայտնի հակառական դրութեան մէջ զանուելով : — Օրէնքէ սահմանուած պատուհան թէպէտ ի այսօր թե եւեգոյն է, բայց հետզհտէ իրաւախոհ և արգարասէր մարդկութեան մեծամասնութեան բողոքը պիտի սաստկացընել տայ զայն, մինչեւ անշուշտ օր մի՛ մենամարտը հասարակ եղենագործութեանց դասակարգին մէջ պիտի արձանագրուի օրէնսդրիներէն :

« Մենամարտի անհետացման աստիճանն ուրինն իրնանց չափ մի՛ համարիլ ազգի մ'օրինաց կատարելագործութեան : Օրէնսդրութիւնը հիմուուած պէտք է լինի առողջ մորիլ, ուղիղ բարյոյականի և կրօնական սկզբանց վրայ . բայց այդ երեց սկզբունքն ալ չեն կրցած և չեն կարող ընդունիլ երբեք մենամարտը՝ իրբեւ խելացի, իրբեւ արզար և իրը աստուածահաստատ գործ մի՛, յորում շատ անգամ կը վասի այն որոյ կողմէ են իրաւունք, աննպատակ կը մնայ նա՝ օր իրեն նպատակ օսնէր արգարութիւնը պաշտպանել, և կը բարձուի մանդկային սեպական կամօց (ինքնապահութեամբ) կեանց մի՛ որուն հեղինակ կամ արարիչ կատուած միայն լինելով՝ առանց արարչին կամաց բանական օրինաւոր չէ, այլ կրօնական եղենն է, արարչին իրաւանց բռնարարութիւն է :

« Ճէ կարելի և չէ ուղիղ մենամարտը բազգատել պատերազմի հետ, և մի և նոյն սկըզբունքի, այսինքն՝ իրաւանց և անձնն պաշտպանութեան սկզբունքի արդինց համարիլ : — Նախ այս ըսեմ՝ որ պատերազմն ուղիղ բարյոյականի համաձայն է երբ օրէնք լինին պատերազմ մղողն, և ոչ անգանելի կիրք՝ որ օրինաց հակառակ են, իսկ մենամարտն՝ ոչ միայն աստուածային կամ կրօնական՝ այլ և մարդկային օրէնքով զատապարտուած է իրը զարցումն ուղիղ բանականութեան և իրը խանգարիչ արգարութեան : Հետեւաբար՝

մինչդեռ պատերազմը կրնայ օրէնքով բանաւ-
տը և արդարացի և բարյալիան գործ մի
լինել, ընդհակառակն մենամարտն՝ օրինաց
հակառակ լինելով՝ միշտ յիմարական, միշտ
անիբառ և միշտ անբարոյական գործողու-
թիւն մ'է:

«Պիտի առարկենս ոմանց ձեզմէ թէ Բնշչ
պէս կարելի է արգեօց՝ հասարակաց աղեն-
տից պատճառ եղող՝ տերիչ և սպանիչ ու
զայնանական պատերազմը, (վասն զի ամէն
պատերազմ իւր մէջ այդ յատիւութիւնները
կը պարունակէ), բանաւոր և արդարացի և
բարյոյական լինի. մինչդեռ պատերազմն ուրիշ
քան չէ՝ բայց եթէ երկու խումբ մարդկանց
կամ երկու ազգաց մէջ տեղի ունեցած մե-
ծաղյոն մենամարտ մը, ինչպէս զիրջինս ալ
ուրիշ բան չէ՝ բայց եթէ անհատականաց
պատերազմ մի: Ալոդ, եթէ իրենց թոյն կու
տան՝ նպատակի մը հասնելու համար՝ թիւ-
րաւոր մարդոց գէմ առ զէմ պատերազմելու
և զիրար սպանելու՝ օրէնքը սահմանաւած
զէնցերով և կարգերով, նոյն օրէնքը պատճառ
չունին արգիլեակ՝ որ մի և նոյն կամ հա-
մանան նպատակի համար (պատույ կամ
շահու պաշտպանութեան) երկու անձններ ալ
զէմ առ զէմ չպատերազմին օրէնքէ սահ-
մանաւած զէնցերով և կարգալութեամբ: Ուստի կամ պէտք է պատերազմն ալ ապօ-
քն և եղենական համարի, և կամ մե-
նամարտն ալ օրինաց և բարյոյականի հա-
մաձարին:

«Այսպէս պատճառաբանող մի՛ փալ հա-
մոզման մէջ կը զանուի. որովհետեւ թէ՝
մարգիկային և թէ՝ աստուածային օրինաց
նպատակը կամ թոյլուութեան հիմնաը՝
սփալ ըմբանողաթեան մի վրայ կը զնէ, և
այս կերպով կը շփոթէ հասարակաց օրինաց
իրաւունքը՝ առանձնականի մը սեփական
իրաւունքին հետո. Ո՞ր և իցէ անձի մը սե-
փական իրաւունքն՝ իրեն կամքին ազդին է.
բայց այդ ոտքելու կրնայ երբեմն արդար և
երբեմն անարդար լինել, կրնայ մարգիկային
ընկերութեան մեղք օգտաւէտ և մերժ ալ
վասակար լինել. ուստի, հասարակաց ո-
րէնքն՝ իրեն օրինական իրաւունք՝ կը շա-
փառուէ այս սեփական իրաւունքը կամ այդ

ուշելը, զնիկով անոր գէմ պայման, տաճ-
ման, արգելք և ոյժ։ Տւկից յառաջ կու զան՝
անհնազանից համար ստհմանուած դատա-
պարտութիւնը, սուլանց, բանդարցելու-
թիւնը, արուրք և գիշապարտութիւնը։

«Հասարակաց այդ օրէնքին՝ առանձնաւ կանաց կամբին վրայ ի զործ զրած ստիպման կամ բանութեան կիմ է (աստուածազիր իրաւունքն զատ) հասարակաց բարին։ Արդ, այս հասարակաց բարոյն իրաւունքը՝ ինչպէս առանձնականաց կամբին օրինաւորապէս արգելը կրոնայ զնել և անհազանդները պատճել, այսպէս կրօնայ նաև խումբ մի մարդկանց և կտմ առդ մը կազմող բաղմութեան անարդար կամբին ասկման զնել և շնչազանդողը պատուհասել՝ զինու զօրութեամբ, սպանմամբ, կոտորածներով կամ պատերազմնի, վասն զի օրենք (թէ՛ ինինի մարդկային և թէ՛ աստուածային) ընդհանուր մարդկութեան բարին կամ երջանկաթիմն իրենց նպատակ ունին։ բայց այդ բարին խաղաղութեան մէջ կը զտնուի, իսկ նադառութիւնն ալ հաստատուած է արդարութեան վրայ, որոյ պահանջով մի կամ միւս կողման համար յառաջ կու զան զրկանք, և այդ զրկանք կը ծննան նախ բողոք և յետոյ պատերազմ, որ է արգարութեան վերահասատուն միջոց և եղած անիրաւութեան մի պատուհաս կամ օրինաց վրէժինութիւն։

« Երբ արդարաւթեան օրինաց խանգարիչը՝
առանձնականը սմանը լիիին՝ սոքա շնու կըր-
նար օրները գործազրել տուող իրաւացի
բանութեան զէմ՝ փոխադարձ ևսկական ըլլա-
նովիւն ի գործ զնել, հետեւաբար տեղի կու
տան կամ կ'ընկնաւին: Բայց երբոր արդա-
րութեան օրինաց խանգարողը ոչ թէ ոմանց՝
այլ որոշ խոսմք մի մարդկանց լինին և կամ
ամբողջ ապօք մը զուու կեցող վարչական
մարմին մը, և կամ նոյն իսկ ազդի մամ-
բոլուսմիւնն, այս ժամանակ արդարութեան
օրինաց իրաւացի բանութեան զէմ՝ հակա-
գարձ անիրա բանութիւն մ'ի գործ կը դուռ:
ուսկից կը ծագի պատերազմն: Այսով պա-
տերազմող կողմանց մէկը պաշտպան է ար-
դարութեան, որ է մարդկութեան հասարա-
կաց բարին, իսկ միւսն ոնքարդարութեան,

որ է սեփական ազգային բարելց՝ հակառակ ընդհանուրին բարեաց՝ Անպիսի պարագայի մէջ՝ առաջնոյն գործն իրաւացի է, որովհետեւ համաձայն է օրինաց, իսկ երկրորդին անիրաւ է որովհետեւ զատապարտեալ է օրէնքն. վասն զի չէ կարելի որ մի և նոյն ժամանակ և մի և նոյն խնդրոյ մէջ՝ արդարութինն երկու հակառակ կողման ալ պատկանի. — Այս կերպ արքման կրնաց պատեարագին իրաւացի, օրինաւոր և բարոյական լինել:

«Բայց կրնայ լինել նաեւ որ մի և նոյն ժամանակ երկու կամ աւելի իրարմէ տարբեր խնդիրներու պատճառաւ լինի պատերազմն, որոց ոմանց մէջ արդարութիւնը մէկ կողմին պատկանի, և այլոց մէջ միւս կողմին. Այս պարագայի մէջ պատերազմն երկու կողմանէ ալ միանգամայն կը լինի մասամբ մի արդար և մասամբ մի անիրաւ:

«Փափացելի բան է յիրաւի՞ որ պատերազմանը բասաւ տեղի չունենային մարդկութեան մէջ, և թէ՛ լինէր գերազոյն տաեան կամ վճռատու ժողով մի կամ հասարակաց ամենայն ազգաց պատգամատու մի միայն ձայն, որ այսպիսի պարագայից մէջ իրաւարար լինէր անբուղողելի վճռով. բայց այդ փափացն՝ միշտ փափաց մնացեր է մինչեւ այսօր և շատ հաւանական է որ նոյնպէս մնայ նաեւ մեզմէ վերջն ալ: — Վասն զի այդ վճռատու ձայնն պէտք է առնենայ մարդկային օրէնսդիր իշխանութիւնն վեհագոյն իրաւասութիւն ունեցող իշխանութիւն մի. արդ, այդ իշխանութիւնն է աստուածային կամքն, որոյ մենինի կամ յայտարարողն է կրօնական իշխանութիւնն երկրին վրայ: — Այս վերջն իշխանութիւնն կրնար ամենայն ազգաց օրինաց մէջ ծագաց վեճերու միակ վճռատու և իրաւարար լինել, եթէ լինին երկրին վրայ նաեւ կրօնից տարբերութիւնը, որով նաեւ կրօնական զանազան իշխանութիւնը՝ մին անկախ մնան:

«Այսպէս ուրեմն՝ մինչեւ սեփական կամ անձնական իրաւունք մենամարտութեան՝ ստորագասեալ են հասարակաց բարելց վրայ հսկող օրինաց իրաւունքին, այս վերջինս ընդհակառակն անկախ է իրարանչիւր ազգաց

մէջ, և իւր անկախութեամբ կը զնղծանի երեխն՝ հակառակ կենարով ուրիշ ազգի մ'արդարութեան պաշտպան օրինաց: «Մինչեւ հիմայ ըստէն հետեւանց կ'ելլէ ուրեմն, որ՝ մինչդեռ պատերազմն կ'ույա լինել մերթ իրաւացի և մերթ անիրաւ, ընդհակառակն մենամարտն միշտ անիրաւ է, վասն զի օրինաց հակառակ է: — Հետեւարակ վարչական մարմինը պէտք է հսկեն խստի որ օրէնք յարգուին ամենէն, և բարարոս զարերէն մեզի ժառանգութիւն ձգուած մենամարտի մնացորդն ալ չնջուի և խսպանէն ետանայ»:

Մ Ի Հ Ր Ա Կ Ա Ն

Ուսանող միջն. վարժարանի մը



Գ Ի Տ Ա Կ Ա Ն

Ն Ա Ր Ա Գ Ի Ի ՞Ց

Ա Ն Թ Ե Լ Հ Ե Ա Ա Գ Ի Ր

(Եար. տես էջ 199)

Դ

Ելեկտրականութիւնը թրմուացընելու համար ջննուած գործիքներ. — Մարկնի կը գործածէ զանոնի իւր նեռագրին համար. — Ալպատամբ աղցցուկ մը եւ զայն նուանելու կերպը:

Գլխաւորաբար Բ'նչ բան կարեւոր էր Մարկնի՞ որ իւր մնածածն ի գործ զնէր: — Հեռագիրը դրիող գործիքն մէջ՝ այնպիսի կազմածի մը պէտք ունէր, որ յօրինէր և միջոց մէջ նետէր Հերցեան ալիքները. իսկ հեռագիրն ընդունած գործիքն մէջ՝ արիշ կազմածի մը կարօտ էր, որ այն ալիքներն ամփոփէր կամ ընդունէր իւր մէջ և զգալի